

ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

(ԺԱ. - ԺԵ. Դար)

Մեծ. Կարս Դափաղարեան Հաղբատի վանքին նուիրուած իր մեծարժէք հրատարակութեան մէջ ունի նաեւ մէկ «Ժամանակագրական Յուշակ Հաղբատի առաջնորդներին և վանահայրերին», որուն մասին կը յայտնէ թէ «խիստ թերի է» (էջ 275): Ներկայ յօդուածին նպատակն է դարմանել ակնարկուած թերութեան գէթ մէկ մասը:

Ա. — Սիմեոն ձկնակեաց, 991-1005, որ աւարտած է Խոսրովանայ թագաւորի հիմնած Կաթողիկէ Եկեղեցիին շինութիւնը:

1. — Ի ՆԽ [= 991] Թաւանութեան Սիմեոն հայր և Տիրանուն երեց շինեցաք զԵկեղեցի փրկութեան Սիրատա [Սմբատա] և Գուրգենա. — Դափաղարեան, Հաղբատ, էջ 141 (1):

2. — Ի ՆՆԴ [= 1005] Թուիս, ի հայրութեան Սիմեոնի, ևս Աթանգինի և Փիլաքսոն կանգնեցաք զսուրբ խաչս ի փրկութիւն հոգւոց մերոց, և յաւգնականութիւն թագաւորիս մերոյ Դաւթի, և ամենայն երկրպագուաց իւրոց. — Նոյն, էջ 249 (171):

Բ. — Յովսէփ Վանանայր, 1008:

Ի ՆՆԵ թուիս, ի թագաւորութեան Դաւթի և ի հայրութեան Յովսէփա ևս Մասրապ կանգնեցի զսուրբ նշանս յուխիս Հաղբատա. — Նոյն, էջ 179 (49):

Գ. — Յովնանեա Վանանայր, 1063-1067:

1. — Անուամբն Աստուծոյ, ի թուականիս Հայոց ՇԺԲ [= 1063], ևս Աթմանս [առաջ]նորդ ... իս ևս զՓո ... ոյսուն ի սուրբ ուխտս Հաղբատ ի ժաման ... իս հախ ... Բոհանէս սուրբ եկէզիցոյս առաջնորդ ... ի և ... և որդոց Դաւթի [Սմբատա] և Կիւրիկէի արեւատութեան և զերկին ինձ զվարդավառին քառասունքն մինչև ի վարձան աշխարհի ... — Նոյն, էջ 151 (13):

2. — ՇԺԶ [= 1067] Թվին, ևս, հայր Բոհան և միտրան եղբարքս զերեցաք ըզսուրբ աստուածանին զշարաթն աւրն Սահակա և Խաչաւրին՝ իւր ամուսնոյն յամենայն եկեղեցիքս ժամ առնենք, որչափ ինքն կենդանի է՝ իւր ծնողացն առնենք, և երբ կատարին՝ իւրեանցն լինի. — Նոյն, էջ 157 (23):

Դ. — Սարգիս Եպիսկոպոս, 1067-1089:

1. — Նախորդին շարունակութիւնն է: — Ես տէր Սարգիս հաստատեցի զՍահակա և զԽաչաւրիս զյիշատակն, որ յիւրեանց հալալ ընչից ընծայ են ալիալ Ո Դահեկան. — Նոյն, էջ 157 (23):

2. — ՇԼԵ [= 1086] Թուին, ևս տէր Սարգիս առաջնորդ սուրբ ուխտիս Հաղբատա՝ շինեցի զՂաղացս և արարի ազատազաց, արկի և զայգիս, անկեցի և զգրախոս զանազան մրգաբերաւք ի փառս սուրբ Նշանին և ի վայելումն տանս Հաղբատա. — Նոյն, էջ 263 (14):

3. — ՇԼԸ [= 1089] Թուին, ևս տէր Սարգիս, առաջնորդ Հաղբատա, կանգնեցի զնշանս տէրանական զէն հաւատացելոց և պահապան թագաւորաց մերոց Կիւրիկէի, Սմբատայ և Դաւթի զարմի սոցա. — Նոյն, էջ 263 (15):

Ե. — Դեորդ Եպիսկոպոս, 1158-1173:

1. — Թարգմանեցաւ ճառս յԱսորոց ի մեր լիզուս, ի ձեռն Միխայիլի ուրումն կրաւնաւոր քահանայի ասորոյ, և յարմարեցաւ ըստ կարի մերումս լիզուի շարադրութեամբ, ի ներսիսէ կաթիկոսոսէ յեղբարէ Գրիգորիսի Կաթողիկոսի Հայոց, ի թուականութեանս Հայոց ՈԷ [= 1158], ի խնդրոյ Գէորգոս կաթիկոսոսի առաջնորդի սուրբ ուխտին Հաղբատայ. — Յովսէփեան, Յիշատակարանք Չեռագրաց, էջ 371:

2. — 1173 Թուին գրուած յիշատակարանի մը մէջ՝ նոյն տարին ձեռնադրուած Բարսեղ Եպիսկոպոսի մասին կ'ըսուի. «յաջորդեալ զաթոռ տակուն Գէորգոյ» — Նոյն, էջ 408:

Զ. — Բարսեղ Արք. Աւանանց, 1173-1189:

1. — Յոյժ ըղձիւ և յաւէտ տարիմամբ անձկոյ՝ ի վաղուց ժամանակաց տաշարեալ աշամ աստուածահրաշ վարդապետութեան

... տեառն Բարսղի արհիեպիսկոպոսի այսմ աստուածաբանակ սրբարանի, որ ըստ կանխանկատ գիտութեան վերնոյ ղիտմանն՝ եկեալ ի գաւառէն Խաչենոյ, եղև ըստ աջակելոյ հոգւոյն Աստուծոյ՝ վերատեսուչ համայն քրիստոնէից Հայոց, որ ընդ գաւառական թագաւորութեանս Վրաց, յաջորդեալ զաթոռ տեառն Գէորգայ։ . . . Դրեցաւ գիրքս ի թուականիս Հայոց Նորումս 2թ [= 89 + 1084 = 1173]. — Նոյն, էջ 407-410։

2. — Ի ՈԼԸ [= 1189], ի յառաջնորդութեան տեառն Բարսղի՝ հաւրեղբար իմո, ես Դաւիթ, որդի Վասակա, միաբանեցաւ սրբոցս և շինեցի գիտարանս և գեկեղեցիս ի վերա հանգստարանի հաւր իմո և քվեր Բուրգոսանա։ Արդ ազաւեմ սուրբ եղբայրութիւնդ, որ զաղուհացիցն զշաբաթն և զկիրակին . . . իմ մարն՝ Վանենէ, գտաւր Կիւրիկէի թագաւորի, և իմ քվերն Բուրգոսանա, իմ հաւրն առնեն, և յիտ իմ ինձ և իմ քվերն առնեն. — Հաղբատ, էջ 174 (43)։

է. — Յովնանէս եպս. Խաչենցի, 1209-1221։ Ս. Դրեղոր եկեղեցին նորոգած է 1211ին։ Նախկին փոքր գաւթիք քակել տալով անոր տեղ կառուցած է ուրիշ մը մեծ և գեղեցիկ, 1221 թուին։

1. — Յառաջնորդութեան տէր Յովանիսի և ի տէրութեան Ջաքարէի և Իւանէի՝ ես Յովնէփ . . . Կանգնեցաք խաչս . . . որք երկրպագեք՝ յիշեցէք ի Քրիստոս, ևս առաւել զՅովանէս, ի թուիս ՈԾԸ [= 1209]. — Հաղբատ, էջ 262 (11)։

2. — Թվին Ոկ [= 1211] նորոգեցաւ եկեղեցիս ի ձեռն տէր Յոհանիսի և միաբան եղբարցս, յիշեցէք ի Քրիստոս. — Նոյն, էջ 220 (110)։

3. — Ի թուին Հայոց ՈկԹ [= 1220], ի յառաջնորդութեան տեառն Յոհանիսի սուրբ ուխտիս Հաղբատա, ես Քուրդս, որդի Սմբատա, եղբայր տեառն Բարսղի, շինեցի գեկեղեցիս և զպարիսպս ի վերա հանգստարանի իմո, վասն փրկութեան հոգո իմո, և ոչ ժամանեցի կատարել, զի կոչեաց զիս Տէր։ Եւ մեք, Սմբատ և Ուքան, որդիք նորա, կանգնեցաք զխաչս և աւրհնեցաք գեկեղեցիս. — Նոյն, էջ 229 (128)։

4. — Յամա աստուածազաւր թագաւո-

րացս Քամարա [1184-1212] և որդո իւրո Գէորգէ և Բ հարազատաց Ջաքարէի և Իւանէի, հրամանաւ սոցա կոչեցա յեպիս. կոպոսութիւն սուրբ աթոռոյս Հաղբատա, ես Յոհանէս ի խաչենո ներդոութեամբ Աստուծոյ կոցեալ իմ ամա բազում յառաջնորդութեանս, և ըստ իմում կարողութեանս սպասաւորեցի սրբոցս ի շինութիւն և յառաջգիմութիւն տանս Աստուծոյ։ Նախ ի ձեռն շինուածոց ի Սուրբ Նշանս, ի մատենո, ի սպաս զարդուց, զկաթուղիկէս սաւել և զդուռնս կազմել, զսուրբ Գրիգորն նորոգել, զգաւթս շինել, զգաւթի սուրբ սեղանոյն և զԳ սուրբ Նշանս։ Եւ իմ խնդիր է ի միաբանացս, զսուրբ Յակոբա տաւրի կիրակէն իմ սուրբ Նշանացս առն կատարեն և զպատարագ աւուրն ինձ մատուցանեն յամէն եկեղեցիս։ Եւ մի ոք իշխեսցէ այլում տալ յայսմ աւուր զժամն։ Եւ որք կատարեն զաղաչանս մեր՝ աւրհնեսցին ի Տեառնէ, ամէն, ՈԼ [= 1221]. — Նոյն, էջ 180 (50)։

Ը. — Յովնանէս եպս. Դովեան, 1233-1240. — Եղբորդին էր նախորդին և քեռորդի Ջաքարիս և Իւանէ իշխաններուն։ Շինել տուած է բերդ մը Հաղբատի և Սանահինի միջև։

1. — Ի թւին Հայոց ՈԶԲ [= 1233], կամաւն Աստուծոյ, ես տէր Յոհանէս, առաջնորդ Հաղբատա, քուրորդի մեծ պատանացն Ջաքարէի և Իւանէի, ի ժամանակիս, որ եհաս սասանումն աշխարհիս մերոյ անաւրէն Ռորագմեցն, ոչ գոյր տեղի ապաստանի սուրբ Նշանիս և եղբարցս, հրամանաւ քեռոյն իմո Իւանէի և որդւոյն իւրոյ Աւագին, և Շահնշահի՝ որդւոյն Ջաքարէի շինեցի զամրոցս և գեկեղեցիս Հաղբատա սուրբ Նշանիս բազում աշխատութեամբ։ Արդ, եթէ ոք զսա ի Հաղբատա հանէ, թէ ի մեծաց, թէ ի փոքունց, զինչ և իցէ պատճառաւ, մարդն այն նզովեալ եղիցի ի մահ և ի կեանս, զինչ ի յկաւմա մինչև ի դալուստն Քրիստոսի նզովք կա՝ ի վերա նորա եղիցի . . . Եւ որք հասաւատ պահին, աւրհնին յԱստուծոյ։ Եւ պարտին ինձ՝ տէր Յոհանիսի, զԱստուածածնին տաւրի Գ աւրն ի սմա զպատարագն ինձ. — Նոյն, էջ 250 (173)։

2. — Համազասպ Եպիսկոպոսը առաջ-

նորդ եղած է 1242ին, անկէ առաջ Յովհաննէս որդի Աղսարթանայ երկու տարի, այսինքն 1240-1241, որով Գոփեան Յովհաննէս պաշտօնավարած կ'ըլլայ մինչև 1240. — Հմտ. Կիրակոս, Վենետիկ, 1865, էջ 56:

Թ. — Յովնանէս որդի Աղսարթանայ, 1240-1241. — Եւ յետ մահու Եպիսկոպոսին Յոհաննիսի՝ եկաց ի տեղի նորա Յովհաննէս որդի Աղսարթանայ՝ ի Մածնաբերդէ Բագրատունեացն՝ առաւ երկու . . . և յետ նորա Համազասպ ի քաղաքէ Անուոյ. — Կիրակոս, էջ 56-7:

Ժ. — Համազասպ Արք. Անեցի, 1242-1261. — Շինած է զանգակատուն եկեղեցի (1245) և Ժամատուն (1253-7):

1. — Կամաւն Աստուծոյ, ես Սասնա, որդի Ասլանափին և ամուսին իմ Ռուսու, քան, յառաջնորդութեան տէր Համազասպայ, հոգս տուն զրաք զսուրբ ուխտս Հաղբատ և տուաք . . . ընծայք . . . սօքս էտուն մեզ զՔառասնիցն աւրն պատարագ զամէն եկեղեցիքս . . . Թու ՈՂԱ [= 1242]. — Հաղբատ, էջ 178 (47):

2. — Ի տէրութեան սուրբ ուխտիս Շահանշահի, ի թուին ՈՂԴ [= 1245], շինեցաւ գեղեցկազարդ տաճարս Աստուծոյ՝ զարթուցանող փառաբանչաց Տեառն՝ և թին խորանաւ ի տէր Համազասպա, որում ողորմեացի Քրիստոս և տացէ ի լուսեղէն յարկաց իւրոց հոգս նորա և Յոհաննիսի քուերորդս իւրս և այլ աշխատողացն, զի բազում քանիւ շինեաց զսա ի գառն ժամանակս տաթարաց. — Նոյն, էջ 222 (112):

3. — Ի թուին Հայոց 22 [= 1257], ի տէրութեան մեծին Շահնշահի և Զաքարիայի, շինեցաւ մեծափառ տունս Աստուծոյ ի տէր Համազասպա, որում ողորմեացի Քրիստոս բարի հոգոյ նորա. ամէն. — Նոյն, էջ 217 (102):

4. — Ի թուականութեան 22 [= 1261] եղև սկիզբն և կատարումն համառատ վերալուծութեան արարչապատում մովսիսական մատենիս, ի խնդրոյ արհիական տեառն Համազասպեա և վարդապետին Գրիգորի, փակակալին Սր. Ուխտին Սանահնի, սատարութեամբ անարժան ծառայի քրիստոնէից՝ Վարդանայ. — Յուշակ Զեռագրաց Ս. Յակոբեանց, Ե., էջ 125:

ԺԱ. — Յովնանէս եպս. Դոփեան, 1261-1288, որդի Գրիգորի: Շինած է Հաղբատի Կրատունը (շ. 1267). Կանգնել տուած է Ամենափրկիչ խաչարձանը (1273):

1. — Ի թվին 22 [= 1261]. Կամաւն Աստուծոյ ես Նուաստ ծառա Քրիստոսի, Սարկաւագ վաճառական, որդի Վրթանիսի Գառնեցոյ, ապաւինեցաւ ի Ս. Նշանս Հաղբատայ, և կազմեցի խաչ մի արծաթի ոսկեզաւծ և ի նափորտ նասիճ, և ասլաս վառ վասն փրկութեան հոգս իմո, և ետու ի սուրբ ուխտս: Եւ եպիսկոպոսս տէր Յովանէս, հանդերձ վարդապետաւքս և միաբանաւքս ընկալան և սահմանեցին ինձ յամենայն ամի Ժ պատարագ յետ ծակամտին Բ Կիրակէին . . . — Հաղբատ, էջ 166 (35):

2. — 1273ից առաջ. — Շնորհաւք Ս. Երրորդութեան և ողորմութեամբ Ս. Նշանիս, ես տէր Յովանէս, Նուաստ ծառա մատուցի Աստուծոյ, շինեցի զգաւթս և զգրատունս և զսրահս նորին, ածի զպաշտոն զլիճն և ետու կազմել մեծածախ պահարան Ուրդածորս Ս. Նշանին. գնեցի զգեղս Բաւլա և ընծանցի Ս. Նշանիս՝ վասն արեւատութեան պատրոն Սաղունին և զաւակաց իւրոց, և յիշատակ ինձ և ծնողաց իմոց և եղբարց և Սարգիս Վարդապետին և ամենայն արդիւնաւորաց . . . — Նոյն, էջ 213 (96):

3. — Թվականին 218 [= 1273], յիշխանութեան և ի տէրութեան Ս. Ուխտիս արքայականութեան պարոն Սաղունին, ես տէր Յովանէս Կանգնեցի զխաչս ամենափրկիչ աւրիական պարոն Սաղունին և յիշատակ հոգս իմո. — Նոյն, էջ 193 (58):

4. — 218 [= 1288] թվիս, սիրովն Աստուծոյ միաբանեցան Ս. Ուխտիս Հաղբատայ աւագերէցն Տփիսեաց Տէրտէրն և ամուսին իւր Նազմիլիք, հանդերձ որդովք իւրեանց, և ետուն ընծայ Ս. Նշանիս խաչ մի արծաթի և երկու նափորտ, և 1 զահեկանս Եւ մեք, տէր Յովանէս և միաբանքս սահմանեցաք նոցա պատարագ . . . — Նոյն, էջ 205 (76):

ԺԲ. — Յովնանէս եպիսկոպոս, 1297 թուին ստորագրած է արեւելեան Հայաստանի եպիսկոպոսներուն և իշխաններուն կողմէ Գր. Անաւարդեցի Կաթողիկոսին զրկուած նամակը. — Օրմանեան, Ազգապատում, էջ 1767:

ԺԳ. — Յովնանեն Եպիսկոպոս + 1395:
Թվին ՊիՊ. Այս է հանդիստ տէր Յով-
հաննիսի. — Հաղրատ, էջ 202 (71):

ԺԴ. — Յակոբ Վանահայր, 1423:

Ախալցխացի Ստեփանոս Վարդապետ
1423ին կ'աղաչէ յիշել, ի միջի ալոց,
ազտէր Յակոբ Վանահայր՝ մեծահոգակ ուխ-
տին Հաղրատայ. — Սաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 312:

ԺԵ. — Զաքարիա Արքեպիսկոպոս, 1437-
1438:

1. — Մարտիրոս Արքեպիսկոպոս Ծարակնոց մը
կը գրէ Հաղրատի մէջ. 1437ին, «ի վար-
ժապետութեան մեծ բարեւոյնս և քաջ
հետաքրքիր Յովանէս Վարդապետի, ի յա-
ռաջնորդութեան տէր Զաքարէի . . . » —
Նոյն, էջ 475:

2. — Աստուածատուր Երէց գրել կու
տայ Ճաշոց մը, Յովհաննէս քահանային,
Հաղրատի մէջ, 1438ին, «Յայն դառն և
կսկծալից ժամանակիս, կարի աղքատու-
թեամբ և չքաւորութեամբ . . . ի յառաջ-
նորդութեան տէր Զաքարիա արքեպիսկո-
պոսիս». — Նոյն, էջ 485-6:

ԺԶ. — Գրիգոր Եպիսկոպոս, 1441 թուա-
կանին մասնակցած է Ս. Էջմիածնի ազգա-
յին ժողովին. — Թ. Մեծոփեցի, Յիշտա-
կարան, էջ 52:

ԺԷ. — Թումա Եպիսկոպոս, 1448:

Մուրատայ Աւետարան մը կը ծախէ
Խաչատուր Երէցին, 1448ին, և այդ առիթ
կը յարէ. «Վկայութեամբ մեր եպիսկոպո-
սիս տէր Թումա և սպասաւորի սուրբ ուխ-
տին Հաղրատայ. — Յիշտ. ԺԵ. Դարի,
Ա., էջ 618:

ԺԸ. — Ղուկաս Արքեպիսկոպոս, 1452-
1455:

1. — Բարոզգիրք մը կը գրուի 1452ին,
Տփղիսի մէջ, «ի վերադիտողութեան նա-
հանգիս Վրաց տէր Ղուկասու Հաղրատայ
արքեպիսկոպոսի». — Սաչիկեան, Յիշտ.
ԺԵ. Դարի, Բ., էջ 17:

2. — Յովհաննէս Բահանայ Աւետարան
մը կ'արտագրէ 1455ին, «ի վերադիտողու-
թեան . . . տէր Ղուկասու». — Ոսկեան,
Գուգարքի Վանքերը, էջ 237-8:

ԺԹ. — Աստուածատուր Արքեպիսկոպոս,
1455-1458:

1. — Գրիգոր արքեպիսկոպոս կը գրէ Աւետա-

րան մը, 1455ին, «ի սուրբ և ի հռչակաւոր
ուխտս ի Հաղրատ . . . յառաջնորդութեան
տեղւոյն տէր Աստուածատուր արքեպիսկո-
պոսիս. — Յիշտ. ԺԵ. Դարի, Բ., էջ 51:

2. — Յովհաննէս Գրիգ կ'որինակէ Ճա-
շոց մը, 1458ին, «ի գերահոգակ ուխտի
Հաղրատ վերածայնելոյ . . . յառաջնորդու-
թեան սուրբ տէր Աստուածատուր, որ ի
յաւուրս և ի ժամանակս յայս կան բազում
կրօնաւորք և աղաւթարարք՝ տէր Ղու-
կաս, տէր Աստուածատուր վարկակալ . . . » —
Նոյն, էջ 98:

Ի. — Ղուկաս Արքեպիսկոպոս, 1462-
1474:

1. — Դաւիթ Երէց Աւետարան մը կը
գրէ 1462ին, «յառաջնորդութեան տէր
Ղուկաս Հաղրատայ արքեպիսկոպոսիս. —
Նոյն, էջ 169:

2. — Աստուածատուր քահանայ կը գրէ
Աւետարան մը, 1474ին, Տփղիսի մէջ,
«Յամա հայրապետութեան տեառն տէր
Սարգսի, և արհիպիսկոպոսութեան տէր
Ղուկասի, որ յայտմամբ չինեաց զանգա-
կատուն բարձր և խաչ ի գլուխ նորա ոսկի
խնձորով». — Նոյն, էջ 362:

ԻԱ. — Պետրոս Եպիսկոպոս, 1491ին վախ-
ճանած է ըստ տապանագրին, ուր կը կար-
դացուի. «Այս է հանդիստ Պետրոս հայրա-
պետի, թվին ԶԽ. — Հաղրատ, էջ 235 (137):

ԻԲ. — Յովնանեն Արքեպիսկոպոս, 1494:
Խաչատուր արքեպիսկոպոսի, որդի Յովհաննէսի
և Հաղրէվարդի, Ծարակնոց մը կ'որինակէ,
որուն յիշատակարանին մէջ կը կարդանք.
«Արդ ես նուստոս . . . Խաչատուր խնդրո-
րանի և յեանն ի բանասիրաց, գրեցի զող-
ոջ ձեռամբ և տխեղձ մ[ատ]ամբ զչարու-
նակ աստուածաշունչ տառս, որ կոչի Ծա-
րակնոց, ի թվին Հայոց ԶԽԳ, ի դառն և ի
չար ժամանակի որով նեղիմք ի յահէ անաւ-
րինաց, առ սոս երկոց երանեալ երջանիկ
և բարունի Դաւիթ վարդապետին, ի յառաջ-
նորդութեան սուրբ ուխտիս Հաղրատայ տէր
Յովհաննէս արքեպիսկոպոսի, ի խնդրոյ և
արդեանց Մկրտիչ Դպրի, ի վայելս անձին
իւրոյ և յիշատակ ծնաւոյց իւրոց, հաւրն
Աստուածակին, որ տարածամ փոխեցաւ առ
Քրիստոս, և բազում սուգ և դառնութիւն
եթող ընդանեաց, և մաւրն Գուլինարին . . . » —
Զեռ. Ս. Յ. Թ. 1627, էջ 689-690:

ԻԳ. — Փիլիպպոս եպս. Առնցեցի, 1498ին օրինակած է մէկ Մաշտոց Զեռնագրութեան. — Կարինեան, Յուլի, Թ. 1055:

Տապանաքարին վրայ կը կարդացուի. «Այս է հանգիստ Փիլիպպոս արհեպիսկոպոսի յԱռնցեցի» . — Հաղբատ, էջ 191 (1է):

ԻԴ. — Սարգիս Վարդապետ, 1568:

«Ի թուին ՌԺԷ. ես Սարգիս վարդապետ կրօնաւոր իմ եղբարօքս կանգնեցաք զսուրբ խաչս ի ճանապարհիս, որ և զուգեցաք զայդիս իւր սնառովքն . . . որ իմ հայրենի ալդին էր տուի վախճն Հաղբատայ Ս. Նշանին» . — Նոյն, էջ 264 (9):

ԻԵ. — Մատթէոս Եպիսկոպոս, 1586:

Հաղբատի մէկ արձանագրութիւնը ղեւեղուած է «Յառաջնորդութեան Ս. Սիրտիս Մատթէոս Եպիսկոպոսի ի թուին ՌԷԵ» . — Նոյն, էջ 265 (26):

ԻԶ. — Սարգիս Վարդապետ Խոյնիկեցի, + 1609:

Նորոգած է Անապատի Եկեղեցին: Տապանաքարին վրայ արձանագրուած է. «ԹՎին ՌԾԸ. Այս է տապան Սարգիս Վարդապետին ազգաւ Խոյնիկեցի և նորոգող սուրբ եկեղեցոյս» . — Նոյն, էջ 245 (164):

ԻԸ. — Կիրակոս Եպիսկոպոս, + 1629:

Տապանաքարին վրայ կը կարդացուի. «Կիրակոս Եպիսկոպոս տեղւոյս: ԹՎին ՌՀԸ» . — Նոյն, էջ 235 (136):

ԻԹ. — Մինաս Վարդապետ, 1641-+ 1651:

1. — Աւետարան մը կը գրուի 1641ին, «Ի գաւազանութեան Հաղբատայ սուրբ Նշանին Մինաս վարդապետին» . — Գուգարքի Վանքերը, էջ 242:

2. — Սարգիս երէց իր մէկ գիրքը կ'աւարտէ 1649ին, «Ի քաղաքս Տփղիս . . . յառաջնորդութեան Հաղբատայ Մինաս բաւոնապետին» . — Նոյն, էջ 242:

3. — Վախճանած է 1651ին ըստ տապանագրին. «Այս է տապան Մինաս Վարդապետին: ԹՎին ՌՃ» . — Հաղբատ, էջ 183 (Թ):

ԻԲ. — Աւետիս Արք. Հաղբացի, 1651-+ 1677:

1. — Ես քաղաքացի խոճայ Բէհրուզս, սուրբ Նշանի հարաւային կամարն վեր էր յընկել, չինկել տվի, յիշատակ ինձ և ծնաւդաց իմոց և կողակցին իմ, յամէն: Շինեցաւ ի թՎին ՌՃ [= 1651], և յառաջնոր-

դութեան յԱւետիս արհեպիսկոպոսին: Շինեցաւ ձեռամբն յԱռնցեցի Նաւայարթին, յամէն. — Նոյն, էջ 148 (8):

2. — Յառաջնորդութեան Թումանի որդի Բարսեղ Եպիսկոպոսի, Աւետիս Եպիսկոպոսի Հաղբատցի: Ես ԹՖ[1]իացի խոճայ Մարթէս Բակորս ալի ի դուռն Հաղբատայ Ս. Նշանին մէկ զանկակս յիշատակ հօրն իմ Գուսպոնին, [մօրն] իմ Ռօստամին: ԹՎին ՌՃԴ [= 1655]. — Նոյն, էջ 224 (117):

3. — Փառք . . . կատարեցաւ խնդրածս յԱւետիս Եպիսկոպոսի և միաբանացն աւանդեալս, որ է առաջնորդ Հաղբատայ Ս. Նշանիս . . . և խիստ աշխատեցան ամենեքեան, յիշեցէք . . . ԹՎին ՌՃԶ, 1657. — Գուգարքի Վանքերը, էջ 243-4:

4. — Աւետարան մը կը գրուի Դսեղի մէջ, 1663ին, Աւետիսի օրով. — Նոյն, էջ 244:

5. — Մաշտոց մը կը գրուի, 1675ին, սրբաւոր և հեղահողի տէր Աւետիս արհեպիսկոպոսի առեւն. — Նոյն, էջ 244:

6. — Ի թՎին ՌՃԻԵ [= 1676], բարեպաշտն ազատազգաց Եկուլինց մեծահաւատ Զաւն, որդի Շահդուլունի, ողորմած աւանանաւ իւրով վերստին նորոգեաց տաճար Տիրամօրն բարիխօս իւրեանց և արեւաւտութիւն որդւոց իւրեանց, ննջեցեւոց և կենդանեաց ի միշտ յիշին: Եւ յառաջնորդութեան Աւետիս Եպիսկոպոսի, և հոգաբարձութեամբ Սարգիս Կրօնաւորի, տէր Բարսեղ. — Հաղբատ, էջ 244 (163):

7. — Այս է հանգիստ Աւետիս արհեպիսկոպոսին, վերստին նորոգող և հաստատող պարսպին. թուին ՌՃԻԶ [= 1677]. — Նոյն, էջ 260 (2):

Ը. — Բարսեղ Արքեպս. յազգէ Թումանցեցի, 1677-+ 1703:

Իր առաջնորդութեան շրջանը կը ճշգրտի համաձայն իր տապանագրին, այսպէս.

«Այս է հանգիստ Բարսեղ եպիսկոպոսի, Ես էի յազգէ Թումանցեցի,

որ բաղուեմ ամս ի յաստ կացի,

ԻԷ [= 27] ամ առաջնորդ կացի.

Թիւն ՌՃԾԲ [= 1703]. —

Նոյն, էջ 266 (27):

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ